

M.H. HAYRAPETYAN

THE PROBLEMS OF SOVIET ARMENIAN LITERATURE AND THE NATIONAL LANGUAGE

The problem of the national language as an exclusive value in the public life and its irreplaceable importance for fiction are considered.

Since the 19th century, the Eastern Armenian literary language, having acquired universal recognition under the influence of discontent and external impacts, occupied the thoughts of Eastern Armenian writers. This was greatly associated with political preferences.

Keywords: national language, literature, prospect.

ՀՏԴ 81'367.622:811.19

Վ.Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳՈՅԱԿԱՆԻ ՀՈԳՆԱԿԻԱԿԱԳՄՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Քննվել են արդի գրական արևելահայերենում գոյականի հոգնակիակազմության այն դրսևորումները, որոնք շեղվում են ընդհանուր օրինաչափությունից: Առկա զուգաձևությունների դեպքում առաջարկվել են ընդունելի ձևերը: Նկատի է առնվել նաև, որ որոշ դրսևորումներ ուղենշում են բնականոն փոփոխությունների ընթացքը:

Առանցքային բաներ. գոյականի հոգնակիակազմություն, հոգնակիակազմիչ, վերջավորություն, բառարմատ, զուգաձևություն, լեզվական օրինաչափություն:

Ներածություն: Արդի գրական արևելահայերենում թեև գործում են գոյականի հոգնակիակազմության որոշ կանոններ, բայց շատ բառերի դեպքում հոգնակիակազմիչները դեռևս հստակ և կանոնակարգված չեն: Համապատասխան բառարաններում և աշխատություններում մի շարք գոյականների համար տրված են բոլորովին տարբեր հոգնակիակազմիչներ: Որոշ զուգահեռ ձևեր արտացոլում են բնականոն փոփոխությունների ընթացքը: Բացի դրանից, առկա են բառեր, որոնցում միավանկ վերջնաբաղադրիչը կարող է միաժամանակ ընկալվել թե՛ գոյականական և թե՛ բայական արժեքով, կամ գոյական լինելու դեպքում դրա իմաստը հնարավոր է մասամբ գիտակցել, որի հետևանքով հոգնակին դրսևորվում է տարբեր ձևերով: Կան դեպքեր էլ, որ գոյականները ավանդաբար են գործածվում այս կամ այն հոգնակերտով՝ որևէ կանոնի չենթարկվելով: Հոգնակիակազմության դժվարություններ առկա են թե՛ միավանկ և թե՛ բազմավանկ բառերի դեպքում: Տարբեր լեզվաբաններ հայերենի ձևաբանությանն անդրադառ-

նալիս ներկայացրել են գոյականի հոգնակի թվի կազմության միայն ամենաընդհանուր դրսևորումները: Սակայն հաճախ բախվում ենք դժվարությունների՝ առանձին բառերի դեպքում չկողմնորոշվելով, թե որ ձևն է ճիշտ և գրական օրինաչափությանը համապատասխան, մանավանդ որ բառարաններում էլ կա՛մ տարբեր ձևերով են ներկայացված, կա՛մ մի շարք բառերի հոգնակի թիվը նշված չէ: Սույն աշխատանքում փորձ է արվում՝ պատասխան գտնելու վերոհիշյալ հարցերին՝ հիմք ընդունելով հայերենի հարուստ բառապաշարը և հայերենագիտության տվյալները:

Գոյականի հոգնակիակազմության հարցերի քննարկումը արդի հայերենում: Գոյականի հոգնակի թիվը արդի գրական արևելահայերենում կազմվում է *-եր* և *-ներ* վերջավորություններով, մի քանի բառերի դեպքում՝ նաև *-իկ*, *-այք* մասնիկներով: Ինչպես արդեն նշեցինք, հայերենում գործում են գոյականի հոգնակիակազմության որոշ կանոններ, սակայն մի շարք բառերի հոգնակի թվի կազմությունը շեղվում է ընդհանուր օրինաչափությունից: Է. Աղայանի արդի հայերենի [1], ապա և ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմած ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարաններում [2] սովորաբար նշված են գոյականներին բնորոշ հոգնակերտները, սակայն ոչ բոլոր գոյականների դեպքում: Հաճախ ներկայացված չեն այն գոյականների հոգնակի թվի վերջավորությունները, որոնք այդ առումով երկվությունների և դժվարությունների տեղիք են տալիս: Հետագայում տարբեր ուսումնասիրողներ ներկայացրել են բառաշարքեր՝ նշելով յուրաքանչյուր գոյականի հազնակիակազմիչը: Վերջիններիս մեջ առավել ծավալուն են հետևյալները՝ Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի հայոց լեզվի ամբիոնի կազմած «Հայոց լեզվի միավանկ վերջնաբաղադրիչով բաղադրյալ բառերի հոգնակիակազմության բառարան»-ը [3] և Դ. Գյուրջինյանի «Անուն խոսքի մասերի թվի կարգը արդի հայերենում» քերականական բառարան-տեղեկատուն [4], որը ներառում է տարբեր տեսակի գոյականներ: Ինչպես և կփաստենք ստորև, հիշատակված բառարաններում և բառացանկերում մի շարք գոյականների դեպքում տրված են տարբեր հոգնակիակազմիչներ:

Ու և *ի* ձայնավորներ ունեցող միավանկ բառերի հոգնակի թիվը կազմելիս հաճախ տվյալ ձայնավորը պահպանելու կամ փոխելու խնդիր է առաջանում: Դրանցում ձայնավորը կա՛մ պահպանվում է, կա՛մ շեշտափոխության հետևանքով վերածվում *ը*-ի, միավանկ բառերի բառավերջյան *ու*-ն էլ կա՛մ պահպանվում է, կա՛մ փոխվում *վ*-ի: Այս առումով մի շարք գոյականների դեպքում հստակություն է դրսևորվում. ա) ձայնավորը միանշանակ պահպանվում է՝ **լուրեր, ոռնգեր, քունքեր, խուլեր, իղձեր, շիվեր** և այլն, բ) ձայնավորը հնչյունափոխվում է

ը-ի՝ **գրեր, բծեր, գծեր, քթեր, բլթեր, թփեր, քրդեր, թմբեր** և այլն, գ) ու ձայնավորը հնչյունափոխվում է Վ-ի՝ **լու – լվեր (ջրավեր), ձու – ձվեր (թխսածվեր, կղբածվեր)**: Մինչդեռ բազմաթիվ այլ միավանկ գոյականներ հավասարապես դրսևորվում են թե՛ հնչյունի պահպանմամբ և թե՛ փոփոխությամբ: Հաճախ դժվար է լինում որոշել՝ որն ընդունելի համարել՝ հնչյունի պահպանումով, թե՛ փոփոխությամբ դրսևորումը: Բնականաբար, այսպիսի հանգամանքներում անխուսափելի է բառարանային տարարժեքությունը: Օրինակ, վերոհիշյալ բառացանկում [4] հետևյալ օրինակները տրված են ստորև նշված զուգահեռ ձևերով. **բիբեր // բբեր (ակնաբիբեր), բուշտեր // բշտեր (թարախաբուշտեր), գուբեր // գբեր, դնչեր // դունչեր, թզեր // թիզեր, թուխպեր // թխպեր, խճեր // խիճեր, խունկեր // խնկեր, խուցեր // խցեր, կուպեր // կպեր, բթեր // բութեր - բութեր** (կետադրական նշան), **ճիպքեր // ճպքեր, նշեր // նիշեր, սուրբեր // սրբեր, փիզեր // փզեր**, ապա և՛ **բուեր // բվեր, (կապովաբուեր)**: Ընդ որում՝ նախաբանում ասվում է, որ առավել ընդունելի են համարվում առաջին ձևերը: Մեր կարծիքով՝ պետք է հստակեցվեն ընդունելի ձևերը և չտրվեն զուգաձևություններ, եթե դրանցով արտացոլված չեն պատմական փոփոխությունների միտումները: Բացի դրանից, որոշ գոյականների հոգնակի թվի հնչյունափոխված հիմքերով դրսևորումները հաճախ նույնանում են ըղձական եղանակի անցյալ ապակատարի երրորդ դեմքի եզակիի ձևին, ուստի համանունություն չառաջացնելու համար նման օրինակների հոգնակին կարելի է կազմել ձայնավորի պահպանումով, ինչպես՝ **նիշեր**, մանավանդ որ որպես բաղադրյալ բառերի վերջնաբաղադրիչ տվյալ արմատում հոգնակիակազմության ժամանակ պահպանվում է *ի-ն՝ ալիքանիշեր, ազդանիշեր* (ԱՀԲԲ- [1]), **անցումանիշեր** (անցումային նիշ), **հաշվենիշեր, գրանիշեր, թվանիշեր, խարտանիշեր**: [4] բառացանկում առաջնային է դիտվել **նշեր** տարբերակը, որը համանուն է **նշել** բայի ըղձականի ձևին, և, որ շատ կարևոր է, որպես վերջին բաղադրիչ հնչյունափոխված տարբերակով չի առկայանում հոգնակիակազմության ժամանակ: Անշուշտ, այս դեպքում պետք է ճիշտ համարել **նիշեր** ձևը՝ մերժելով հնչյունափոխված տարբերակը, թեև առաջնային նշումով է հիշատակված բառացանկում: Այլ խոսքով, հիշատակված զույգ ձևերից կարելի է ճիշտ համարել հնչյունափոխված տարբերակը, եթե համանունություն չի առաջանում այլ ձևերի հետ, և որպես վերջին բաղադրիչ էլ հնչյունափոխվում է: Նկատենք, որ շեշտափոխության հետևանքով *ու* և *ի* ձայնավորների վերածվելը *ը-ի* գրության մեջ մեկ նիշով պակասեցնում է բառաձևը, իսկ խնայողությունը կարևոր պայման է լեզվում: Հակառակ պարագայում, բնականաբար, պետք է պահպանել արմատի ձայնավորը: Ինչ վերաբերում է **բու** բառին, ապա տեղին է *ու>վ* հնչյունափոխությամբ դրսևորումը, մանավանդ որ դրանով նույնանում է **ձու** և **լու** բառերի հոգնակի թվի դրսևորումներին՝ կազմելով ընդհանուր օրինաչափություն:

Գրաբարյան **ն** վերջնահնչյունով բառերից շատերը նույնիսկ գրաբարում, ըստ գրական աղբյուրների, առանձին դեպքերում դրսևորվել են նաև առանց նշված վերջնահնչյունի: Լեզվաբանները դրանք համարել են աշխարհիկ լեզվին բնորոշ դրսևորումներ: Հետագայում տասնյակ այլ բառերում նույնպես ընկել է **ն** վերջնահնչյունը, որը, սակայն, պահպանվել է ավանդաբար փոխանցված քերականական ձևերում, այդպես և՛ հոգնակի թվում: Մի խումբ այդպիսի բառերում, մանավանդ նրանցում, որոնք գրաբարում դրսևորվել են թե՛ **ն** վերջնահնչյունով և թե՛ առանց դրա, հոգնակիակազմության ժամանակ առկա չէ գրաբարյան **ն** վերջնահնչյունը՝ **բռեր** (ԱՀԲԲ – բուռեր /անհնձն. / և բռներ [1]), **շուրթեր**, **սերմեր**, **կողմեր**, **ողեր**, **որմեր**, **ռունգեր** և այլն:

Ըստ ՆՀԲ-ի [5]՝ **որմ** բառը գրաբարյան շրջանում էլ հայտնի էր նաև առանց **ն** վերջնահնչյունի: Հոգնակին կազմվում է սովորական միավանկ բառերի նմանությամբ: **Միջնորմ** բաղադրյալ բառում պահպանված է վերջին բաղադրիչի «պատ» իմաստը: Եթե հաշվի առնենք նաև, որ **որմ** բառը հոգնակի թվում հանդես է գալիս միայն **որմեր** ձևով, ապա ճիշտ պետք է համարել ԱՀԲԲ-ում [1] տրված **միջնորմեր** ձևը. ճիշտ այնպես, ինչպես և **միջնապատեր** ձևում: Սակայն Դ. Գյուրջինյանի բառացանկում առկա է **միջնորմներ** տարբերակով, որը բացատրելի է երեք կերպ՝ կա՛մ **որմ** վերջնաբաղադրիչի գրաբարյան **ն** վերջնահնչյունի գիտակցմամբ, կա՛մ որպես սովորական բազմավանկ բառ դիտվելով, կա՛մ էլ բաղադրության կազմում **նորմ** իմաստը չընկալելու հանգամանքով պայմանավորված:

Մատ բառը հայտնի է երկու իմաստով՝ «ձեռքի մատ» և «խաղողի մատ»: Առաջինի դեպքում հոգնակին նշվում է **մատներ**, իսկ երկրորդի դեպքում՝ **մատրեր** ձևով: Պետք է նշել, որ նախորդը խոսակցական լեզվում տարածում է գտել երկրորդի ձևով: Այն՝ որպես վերջնաբաղադրիչ, դարձյալ տարբեր հոգնակերտներ է ստանում: [4] բառագրքույկում առաջնությունը տրվել է առանց **ն** վերջնահնչյունի դրսևորումներին. այսպես՝ **բթամատրեր** // **բթամատրներ**, **մատանեմատրեր** // **մատանեմատրներ**, **մատրեմատրեր** // **մատրեմատրներ**, **ցուցամատրեր** // **ցուցամատրներ**: ԱՀԲԲ-ում [1] **մատ** բառի հոգնակին տրված չէ, իսկ բարդությունները, բացի **մատանեմատր** // **մատրեմատր** «մատանի դնելու մատը, ճկույթի կողքի մատը» բառից (**մատանեմատրներ**), տրված են **–եր** հոգնակերտով՝ **բթամատրեր**, **միջնամատրեր**, **ցուցամատրեր**: Կարծում ենք, վերջինիս դեպքում պետք է ճիշտ համարել երկու դրսևորումն էլ, մանավանդ որ հոգնակիակազմության կամ բառակազմության ժամանակ գրաբարյան **ն** վերջնահնչյունի բացակայությունը հայերենի բնականոն զարգացման արգասիք է: Որոշ զուգահեռ ձևեր դեռ կողք կողքի գոյակցում են, մինչև որ վերջնական կդառնա **ն**-ի անկումը:

Հարս գոյականը նույնպես գրաբարյան *և* վերջնահնչյունով բառերի ցանկում է: Հոգնակին դրսևորվում է **հարսներ** ձևով: Սակայն որպես բարդության վերջնաբաղադրիչ հայտնի է երկու ձևով էլ: Նորահարս բառը ԱՀԲԲ-ում [1] ներկայացված է որպես ածական, թեև այսօր լիովին գործածվում է գոյականի արժեքով: Դ. Գյուրջինյանը նշված բառի հոգնակի թվի բնորոշ ձև է համարում *նորահարսեր*-ը: Ինչ վերաբերում է *ծովահարս*, *ջրահարս* և *հավերժահարս* գոյականներին, բառարաններում թե՛ *-եր* և թե՛ *-ներ* հոգնակերտներով են նշվում, կամ յուրաքանչյուր բառարանում՝ նշված ձևերից որևէ մեկով: Կարծում ենք, ճիշտ են **հարսներ** և **նորահարսներ** ձևերը, մանավանդ որ վերջինում պահպանված է *հարս* իմաստը: Ինչ վերաբերում է նշված արմատով բաղադրված մյուս բառերին, դրանցում նախորդի նման առկա չէ բուն *հարս* նշանակությունը, ուստի տեղին են **ծովահարսեր**, **ջրահարսեր** և **հավերժահարսեր** ձևերը:

Մեկուկեսականի բառերից (*աստղ*, *արկղ*, *ոսկր*, *դուստր* և այլն) **անգղ** և **գամփռ** գոյականների հոգնակին տրվում է թե՛ *-եր* և թե՛ *-ներ* վերջավորությամբ: Քանի որ առաջին դրսևորումը բնորոշ է բոլոր նմանատիպ բառերին, և այդպիսով նաև պահպանվում է բարեհնչությունը, ուստի պետք է իսպառ մերժել երկրորդ դրսևորումը՝ միակ ճիշտ ձևերը համարելով **անգղեր** և **գամփռեր**:

Բառասկզբում *զ*, *ս*, *շ* և հաջորդող այլ բաղաձայնների կապակցություններից առաջ համեմատաբար ուժգին կամ թույլ հնչում է *ը* ձայնավորը: Այս դեպքում հետևյալները սովորական երկվանկ բառեր են, և հոգնակին էլ պետք է կազմվի *-ներ* վերջավորությամբ, թեև արդի հայերենում տարածում են գտել նաև *-եր* հոգնակերտով սխալաձևությունները. **սկիհներ**, **սպաներ**, **սպիներ**, **սպունգներ**, **շփարներ**, **շփամպներ**:

Բաղադրյալ բառերի միավանկ վերջնաբաղադրիչը կարող է ունենալ կա՛մ գոյականական, կա՛մ բայական իմաստ: Առաջինի դեպքում, եթե տվյալ բաղադրիչը բառի կազմում պահպանել է իր հիմնական իմաստը, հոգնակին կազմվում է *-եր* մասնիկով, չպահպանելու դեպքում՝ *-ներ*-ով՝ սովորական բազմական բառերի նմանությամբ. ա) միավանկ գոյականական վերջնաբաղադրիչի հիմնական իմաստը պահպանվել է. **որմանացքեր**, **աղբակույտեր**, **կիսաձայներ**, **բազմակերեր**, **մոլախոտեր** և այլն, բ) միավանկ գոյականական վերջնաբաղադրիչի հիմնական իմաստը չի պահպանվել. **արշալույսներ**, **բաղաձայններ**, **ժամկետներ**, **ծերակույտներ**, **ծխախոտներ**, **մակբայներ** և այլն:

-երգ վերջնաբաղադրիչով բոլոր բառերի հիմնական իմաստի կազմիչը հենց նշված արմատն է, իսկ առաջին բաղադրիչները սովորաբար արտահայտում են տեսակները: [4] բառացանկում բոլորը տրված են *-եր* հոգնակերտով, միայն *նախերգ* բառի դեպքում երկրորդաբար նշվում է նաև *-ներ* հոգնակերտը:

Կարծում ենք, բոլոր դեպքերում ճիշտ է միայն առաջին ձևը՝ **մեներգեր, նախերգեր, վերջերգեր, ցայգերգեր, օրհներգեր** և այլն:

-Կեպ վերջնաբաղադրիչով բազմաթիվ բառերից մի քանիսում չի գիտակցվում տվյալ իմաստը, ուստի հոգնակին կազմվում է *-ներ* վերջավորությամբ՝ **ժամկեպներ, պեսակեպներ**. Կարծում ենք, նշվածների շարքում պետք է դասել նաև **ստորակեպ** բառը, որի հոգնակին հայտնի է երկու դրսևորմամբ: Դ. Գյուրջինյանը վերջինիս համար նշում է զույգ ձևեր՝ նույնիսկ առաջնային համարելով *-եր* հոգնակերտը [4], սակայն տվյալ բառում, կասկածից վեր է, չի գիտակցվում *կեպ* իմաստը՝ պայմանավորված տվյալ կետադրական նշանի այլ ձև ունենալով: Մնացած բոլոր օրինակներում հոգնակին կազմվում է *-եր* վերջավորությամբ՝ **բուժկեպեր, ելակեպեր, մաքսակեպեր, միջակեպեր, վերջակեպեր** և այլն:

Ֆ. Խլիլաթյանը [6] աշխատության մեջ նշում է, որ *-նիշ* վերջնաբաղադրիչներով բոլոր բառերն ստանում են *-ներ* հոգնակերտը: Սակայն կան մի խումբ նման բառեր, որոնք միայն *-եր* մասնիկով են դրսևորվում: Այսպես՝ **էջանիշներ, հականիշներ, համանիշներ, համարանիշներ, նամականիշներ, չափանիշներ, վարկանիշներ, ցուցանիշներ** և այլն, մյուս կողմից՝ **ալիքանիշներ, հաշվենիշներ, գրանիշներ, թվանիշներ, խարտանիշներ, ազդանիշներ**, նաև՝ **ձայնանիշներ // ձայնանիշներ**. Կարելի է կարծել, որ առաջիններում *նիշ*-ը բայական իմաստ ունի (*նշող*), երկրորդներում *նիշ* գոյականն է, ամենավերջում տրված զուգաձևության մեջ էլ արտացոլված են նշված երկու իմաստները, որոնք հոմանշություն ունեն: Նույն հաջողությամբ տրված բոլոր օրինակները կարող են դիտվել երկակի առումով:

-Պեպ վերջնաբաղադրիչով բոլոր բարդությունների հոգնակի թիվը կազմվում է *-ներ* վերջավորությամբ, մեծ մասինը՝ նաև *-եր*-ով, թեև գրեթե բոլորում էլ հիմնական իմաստի կազմիչը վերջնաբաղադրիչն է: Միայն **նահապեպ** բառում չի գիտակցվում այդ իմաստը, ուստի այն միայն *-ներ* հոգնակերտով է հայտնի՝ **նահապեպներ**. ըստ Հ. Աճառյանի արմատական բառարանի՝ այն պարթևական *nāfapati- «ցեղապետ» բառն է, որը կազմված է nāfa «պորտ, ցեղ» և pati «պետ» բառերից [7]: Հետևյալ բառերում էլ թեև գիտակցվում է վերջնաբաղադրիչի իմաստը, սակայն նախորդի նման միայն *-ներ* վերջավորությունն են ստանում՝ **մարզպեպներ, մոզպեպներ**: Նշված վերջնարմատով մի շարք բառերի բաղադրիչներից աղերսվում է հատկացուցիչ-հատկացյալ կապը, ինչպես՝ **ազարակապեպ, բանտապեպ, գյուղապեպ, քաղաքապեպ** և այլն: Նշված բառերի հոգնակին *-եր* վերջավորությամբ կարող է ընկալվել որպես վայրերից յուրաքանչյուրի *պեպեր*, մինչդեռ *-ներ*-ով արտահայտությունը տարբեր վայրերի՝ գյուղերի, քաղաքների և այլն: Այսպիսի դրսևորումը անմիջականորեն աղերսվում է բաշխական (կամ ստացական) հոգնակիին:

Բայ խոսքի մասի անդեմ ձևերը հայտնի են *դերբայ* և *ձևաբայ* անվանումներով, որոնց հոգնակի թիվը տարբեր ձևերով է կազմվում՝ **դերբայներ** և **ձևաբայեր**՝ երկուսն էլ անդեմ բայերի տեսակներ: Նույն վերջնաբաղադրիչով **մակբայ** գոյականում պահպանված չէ բայ իմաստը, այն նշանակում է «բայի վրա դրվող», ուստի բնորոշ է **մակբայներ** ձևը: Կարծում ենք, ճիշտ կլինի նաև առաջին երկուսի հոգնակի թիվը կազմել –*եր* վերջավորությամբ:

–*Հոր* վերջնաբաղադրիչով բոլոր բառերը, բացառությամբ *ջրհոր* բառի, –*եր* հոգնակերտն են ստանում, թեև բոլորում էլ հիմնական իմաստի կազմիչը վերջին բաղադրիչն է: Ինչպես նկատվում է, մյուս բոլոր բառերը հոդակապով են, որոնցում ավելի լավ է արտահայտված հատկացուցիչ-հատկացյալ շարահյուսական կապը. առաջին բաղադրիչներն էլ ցույց են տալիս, թե ինչի համար է նախատեսված *հորը*, այսպես՝ **ածխահորեր, ականահորեր, աղբահորեր, կեղ-փահորեր, կրահորեր, հանքահորեր**: Ինչ վերաբերում է *ջրհոր* բառին, ապա նրանում բաղադրիչներն առավել սերտորեն են կապված, համեմատաբար թույլ է արտահայտված հատկացուցիչ-հատկացյալ կապը, ուստի որպես սովորական երկվանկ բառ դրսևորվում է –*ներ* վերջավորությամբ՝ **ջրհորներ**, ինչպես որ տրված է նաև [4] բառացանկում: Իսկ ԱՀԲԲ-ում [1] նշված է **ջրհորեր** ձևով՝ նկատի առնվելով, որ այն նշանակում է «ջրի հոր», այսինքն՝ հիմնական իմաստի կազմիչը վերջին բաղադրիչն է: Արդի գրական հայերենում հոգնակիակազմության տեսանկյունից *ջրհոր* բառին են հարում նաև վերոհիշյալ *դերբայ, նախերգ* և երկբաղադրիչ այլ բառեր: Կարելի է ասել, որ միտում է նկատվում այդ տիպի բառերի հոգնակին –*ներ* վերջավորությամբ կազմելու, որը, ըստ մեզ, տեղին չէ, եթե նրանցում պահպանված է վերջին բաղադրիչի իմաստը:

Եթե *շար* վերջնաբաղադրիչով բառերում այդ արմատը բայական իմաստ չունի, ինչպես՝ **պապշարներ, գրաշարներ**, ապա այդ բառերն ստանում են –*եր* հոգնակերտը՝ **ակնարկաշարեր, արամնաշարեր, հաղորդաշարեր, հարցաշարեր, մատենաշարեր, մրցաշարեր** և այլն: *Ողնաշար* բառում ևս գոյականական *շարք* իմաստն է առկա, բայց և այն կազմախոսական բառ է, նշանակում է յուրաքանչյուր մարդու *ողերի* ամբողջությունը, ուստի ճիշտ է հոգնակին կազմել **ողնաշարներ** ձևով՝ որպես դրանց բաշխումը տարբեր անձանց միջև:

–*երթ* վերջնաբաղադրիչով բառերի հոգնակին ԱՀԲԲ-ում [1] տրված է –*եր* հոգնակերտով՝ **չվերթեր, սգերթեր, շքերթեր**, սակայն [4] բառաշարքում միարժեք չեն. **չվերթեր // չվերթներ, սգերթեր, շքերթներ, վրաերթեր, ռազմերթեր, ուղերթներ, քայլերթեր**: Կարծում ենք, ընդունելի պետք է համարել բոլորի –*եր* ով ձևերը, քանի որ դրանցում *երթ* վերջնաբաղադրիչն է հիմնական իմաստի կազմիչը, իսկ առաջին բաղադրիչներն արտահայտում են տվյալ հասկացության

ենթատեսակները: Դժվար չէ նկատել, որ *-ներ*-ով ձևերը հարում են վերոհիշյալ անհոդակապ երկվանկ բարդությունների հոգնակիակազմությանը:

Հակազազ բառը չի նշանակում *զազի* տեսակ, այլ՝ ինչ-որ առարկա՝ ի պաշտպանություն գազերից, այսինքն՝ վերջին բաղադրիչը չի կազմում բառի հիմնական իմաստը, ուստի ճիշտ կլինի հոգնակին կազմել **հակազազներ** ձևով (ինչպես՝ **մակբայներ**), թեև բառարաններում նշվում է *-եր* վերջավորությունը:

Զուգաձևություններով են առկայանում նաև հետևյալ օրինակները՝ **այծենակաճներ** // **այծենակաճեր** (*այծենի* «այծի մորթի» + *կաճ* «թաղիք»), **զառիթափներ** // **զառիթափեր**, **նավախելեր** // **նավախելներ** (ԱՀԲԲ [1]՝ *նավախելեր* - *խել* «նավի հետևի սուր մասը»), **սկեսրայրներ** // **սկեսրայրեր** (նաև՝ *քեռայրեր*) (ԱՀԲԲ [1]՝ *սկեսրայրեր*), **փառապոռներ** // **փառապոռներ** (նաև՝ *նախապոռներ*, *մրցապոռներ*), **քարաքոսեր** // **քարաքոսներ** (նաև՝ *ծովաքոսեր*), **ընծուղներ**, բայց՝ **այծուղեր**. ըստ մեզ՝ պետք է ճիշտ համարել առաջին անդամները՝ հաշվի առնելով վերջնաբաղադրիչների իմաստի պահպանվելու - չպահպանվելու, գիտակցվելու - չգիտակցվելու, բաղադրիչի ինքնուրույն գործածվելու-չգործածվելու հանգամանքը, բաշխականության դրսևորումը և այլն:

Եզրակացություն: Ելնելով քննության առնված նյութից՝ կարելի է եզրակացնել, որ արդի գրական հայերենում մի շարք գոյականների հոգնակիակազմությունը, հիրավի, կանոնարկման կարիք ունի: Այդ հարցի շուրջ պետք է համախմբել հայերենագիտությամբ զբաղվողների ջանքերը: Կարծում ենք, մի շարք դեպքերում տեղին չէ զուգաձևությունների ընդունումը, եթե տարբերակներից մեկը ակնհայտորեն ենթարկվում է ընդհանուր օրինաչափությանը կամ արտահայտում է երևույթների բնականոն զարգացման ընթացքը: Կանոնարկելու դեպքում պետք է հաշվի առնել նմանաբնույթ օրինակների ձևակազմության օրինաչափությունը, անհրաժեշտության դեպքում՝ խուսափել համանունության առաջացումից, նկատի առնել բնականոն փոփոխությունների միտումները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աղայան Է.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., «Հայաստան» հրատ., 1976:
2. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, Ե., Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., 1980:
3. **Մարության Ա.**, Հայոց լեզվի միավանկ վերջնաբաղադրիչով բաղադրյալ բառերի հոգնակիակազմության բառարան, Ե., «Ձանգակ-97» հրատ., 2003:
4. **Գյուրջինյան Դ.**, Անուն խոսքի մասերի թվի կարգը արդի հայերենում. քերականական բառարան-տեղեկատու, Ե., «Լիմուշ» հրատ., 2007:
5. Նոր բառգիրք հայկազգեան լեզուի, Վենետիկ, 1836-1837:
6. **Խլղաթյան Ֆ.**, Ժամանակակից հայոց լեզու, Բ մաս, Ե., «Ձանգակ» հրատ., 2010, էջ 20-27:
7. **Աճառեան Հ.**, Հայերէն արմատական բառարան, Ե., 1971-1979:

В.М. ХАЧАТРЯН

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ О МНОЖЕСТВЕННОМ ЧИСЛЕ
СУЩЕСТВИТЕЛЬНОГО В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Рассматриваются проявления множественного числа существительного в современном восточноармянском языке, которые отклоняются от общей нормы. Для существующих пар предложены приемлемые формы. Отмечено, что некоторые проявления определяют направление нормальных изменений.

Ключевые слова: множественное число существительного, форма множественного числа, окончание, корень, грамматическая версия, литературная норма.

V.M. KHACHATRYAN

SOME ISSUES ON THE PLURAL FORM OF NOUN IN MODERN
ARMENIAN

The expressions of plural nouns in modern literary Eastern Armenian which deviate from the general standard are studied. Acceptable forms have been preposed for the existing pairs. It has also been noted that some manifestations determine the direction of normal changes.

Keywords: plural form of nouns, plural form, ending, root, grammar version, literary norm.

ՀՏԴ 81.282:81'367

Լ.ՈՒ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԴԱՐՁՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԿԱՐԾՐԱՏԻՊԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ
ՈՐՊԵՍ ԽՆԴԻՐ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ

Դիտարկվում են շարահյուսական կառույցի լեզվական շինանյութ ներկայացնող դարձվածքները և խոսքային կարծրատիպերը: Կայուն կամ վերահիմաստավորված լեզվական այս միավորները յուրահատուկ դրսևորում ունեն հատկապես խնդրային ստորադասական նախադասություններում, որտեղ կարող են ունենալ գերադաս կամ կախյալ բաղադրիչի հստակ կարգավիճակ կամ հանդես գալ որպես այդ բաղադրիչների ձևավորման էական մաս:

Առանցքային բառեր. դարձվածք, խոսքային կարծրատիպ, բարդ ստորադասական նախադասություն, խնդրային ստորադասություն, ստորոգում, շարահարական կառույցներ, եղանակավորում:

Գեղարվեստական խոսքում, հատկապես կերպարային լեզվի տիպականացման միտումով, շատ են հանդիպում կառույցներ, որոնց մեջ գերադաս կամ կախյալ բաղադրիչի դերում հանդես է գալիս դարձվածքը, որը «բառերի կայուն,